

# ՄԱՅԹԻԿ ՏԵՊԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ.

1896 թուի Փետրվարին ես Սօվիայից հասայ Պոլիս,  
ուր ներկայ էի բոլգարական գահաժառանդի ուղղափառու-  
թեան գարձնելու հանդիսին։ Պօլիսը դեռ մի էր վերջին  
«յեղափոխութեան» հետքերով, ինչպէս որ կոչում էին  
մահմէդական Ստամբուլի տականքների միջոցով ոստիկա-  
նութեան սարքած հայկական սպանդանոցը սուլթան Ար-  
դուլ Համիդի զօրաց հովանաւորութեան տակ։ Ես իշխա-  
նեցի ինձ վաղուց ծանօթ ֆրանսիական փոքրիկ հիւրա-  
նոցը (Hotel de France), որի տէրը մի ունդարացի էր և  
հետեապէս շնորհիւ իւր ազգային ծաղման—թուրքասէր\*  
Չը գիտեմ, թէ այժմս ոբտեղ է պ. Ֆրանկլը, որովհետեւ  
1901 թուին ես Պօլսում չը գտայ ոչ նրան և ոչ էլ նրա  
հիւրանոցը։ Սակայն կարծում եմ, որ դրամատէր դառ-  
նալով, նա այժմս գիմած կլինի քաղաքական ասպարիզի,  
օրովհետեւ նոյն իսկ գեսպանատների եկուոր գիւմնա-  
գէտների (գիպլոմատ) մէջ ես համարեա երբէք չեմ հան-  
դիպել այդ զարմանալի մարդու ունեցածից աւելի հիմ-  
նաւոր ուսումնասիրութեան, առաւել խոր ըմբռնողու-  
թեան և աւելի նուրբ զգացողութեան դալիք արևելեան  
գործեր նախագուշակելու մէջ։ Կրկնում եմ, որ նա թուր-  
քասէր էր, ինչպէս և այն եւրոպացիներից շատերը, ոսոնք  
արտօնեալ ապրում են Պերայում իրենց դեսպանատների  
պաշտպանութեան ներքոյ, որոնք առ տեղեաւ աննկատելի  
են գարձնում այն բռնակալական ըէժիմը, որի տակ հե-  
ծում է՝ ոչ միայն երկիրը, այլ և իրենց բնակած Պօլսոյ  
միւս թագերբք Պերայում եւրոպացու առաջ ամեն ինչ  
խռնարհւում է, կուչ գալիս։ Ղալաթիոյ ոստիկանութեան  
հոգսը ֆրանկ բուրժուազիային և արդիւնաբերող արհես-  
տաւորներին պաշտպանելին է միջազդային քրիստոնեայ

իսուլիդաններից, որոնք հառաքուել են աշխարհի ծայրերից և բուն դրել Տաճկաստանի ափերին և ի մի ձուլուելով կազմել արեելեան մի ցեղ, որն իշխում է մեծ քաղաք-ների եւրոպական թագերում՝ ճիշտ այնպէս, ինչպէս և իւր որջերում. Պոլսում եւրոպացին, եթէ միայն անգլիացի չէ, խելացի բան կանի, որ Հին Բազարի, Այա Սօ-ֆիայի և Զիարշաւի հրապարակի դժից չը հեռանայ. իսկ Ասիական ափին և Սկիւտարի թագում յաճախ անգլիա-ցիների գլխներին էլ են քարեր տեղում, եւ ահա թուր-քասէր՝ նրա պաշտպանութեան տակ վաստակած դրա-մագլիսի համար իւր առևտրականի սրտի խոլքից տաճկաց կառավարութեան շնորհակալ և ի խորոց սրտի առող ամեն տեսակ բօլգարներին, հայերին, մակեդոնացիներին և երիտասարդ թուրքերին, որոնք ըմբոստանում են ազա-տութեան ձայն բարձրացնել և նոյն իսկ զէնք վերցնել նորին Մեծութեան Արդուլ Համիդ փադիշահի բարերար իշխանութեան դէմ,—նոյն իսկ այդ մարդը, նկարագրելով կանոնաւոր զինուած ու կազմակերպուած անպիտանների ձեռքով կատարած անպաշտպան մարդկանց կոտորածների սարսափները, չէր կարողանում զսպել արտասուքները, պատմում էր գունատուած, սոսկումով և շարժելով դէպի երկինք բարձրացրած ձեռքերը.—դոքա գաղաններ են, սինեօր Ալէքսանդրո, —բացականչում էր նա. մենք իրար հետ միշտ իտալերէն էինք խօսում.—դրանք իսկական վայրենի գաղաններ են, նրանց պէտք է պահել վանդա-կում՝ շղթայակապ . . . Ո՞հ, որքան կը փոշմանի երբեկցէ և հաւատացէք, շատ շուտով, Ռուսաստանը, որ նրանց թոյլ տուաւ թուլացնել իրենց շղթաները և վանդակից դուրս նայել:

Ռուսական գեսպանատան պահականաւերի վրայ սպաները քաղաքգիտաբար լուռ էին մնում, բայց երբեմն չէին կարողանում զսպել իրենց և զայրացած արտասա-նում էին դժգոհութեան դաժան խօսքեր. ինչու միջազ-գային նաւատորմիզն ուշացաւ և չը հասաւ այդ սարսա-փելի օրերին, ինչու «Թօնեցը» լուռ կանգնած մնաց

թովիսանէի առաջ, երբ ամենափոքրիկ ցոյցն անգամ՝ այդ  
հին քաղաքի կեդրոնում, —որտեղ առանց թուրքերի  
թոյլտութեան չի կարելի մտնել ոչ Սև ծովից Բօսֆորով  
և ոչ էլ Միջերկրական ծովից՝ Դարդանելի նեղուցով և  
Մարմարայ ծովով, բայց որը միանգամայն անպաշտպան է  
հէնց որ մէջը մտնել կարողացան և կարող է թնդանօթ-  
ների մի քանի տասնեակ զալպերից աւերակների փոխ-  
ուել, որը շատ լաւ յայտնի է տաճիկներին, և երբ ասե-  
նափոքրիկ ցոյցն անգամ՝ կարող էր փրկել հաղարաւոր  
զոհերի կեանքը։ Նաւաստիներին նաւի վրայ զսպելը շատ  
դժուարին էր, որովհետեւ նրանք տեսնում էին ափին կա-  
տարուածները և փափագում միջամտել։ Աւստրիական նա-  
ւերի նաւաստիները, որոնք պաշտօնավարական կարգա-  
պահութեամբ կաշկանդուած չէին, դէպքերն ի հարկէ  
պատում էին մեծ անկեղծութեամբ։ Կոտորածի ամենա-  
սոսկալի մասն էր (էպիլոդ) հայ բանւորական թաղի գի-  
շերով ամայացումը, որտեղ կ. Պօլսի ոստիկանութիւնը  
ապագայ հայկական յեղափոխութեան մարտնչողների բա-  
նակն էր ենթագրում։ Այստեղ արդէն «տականքի մար-  
դիկ» չէին, գործում, ինչպէս մեզանում անուանում էր  
իրաւաբանական լեզուն խուլիդանութիւնը ՀՎԱ դարում,  
այլ տեղական պահակազօրի զինուորները։ Քնած, միամիտ  
և ոչ մի չար բանի շըսպասող մարդկանց մորթոտում էին  
անխտիր ոչխարների նման՝ առանց հրազէնի. գործ էին  
ածում մի միայն սուիններ, հրացանի կոթեր, երկաթա-  
գլուխ դագանակներ և որեր—անձայն գործիքներ, որոնք  
սոսկալի են զնուական և փորձուած ձեռքերի մէջ։ Յաղ-  
թողների կամքին անձնատուր լինելն ու գթութիւն հայ-  
ցելը նոյնքան քիչ էր օգնում, որքան դատարկ ձեռքերով  
պաշտպանութիւն։ Դիակները բարձում էին հին առագաս-  
տանաւերի վրայ, վերևից լցնում քարերով, կապկալում  
չուաններով և այնուհետեւ տանում Ոսկեղջիւր և այնտեղ  
ափերից հեռու բանալով զեկի կամ նաւի քթի տակի  
մասը, սուզում էին նաւը ծովի խորքերում։ Այնուհետեւ  
երբ մարդասպանները յոգնեցան մասդկանց արիւն և

ուղեղ ցրուելուց, ոստիկանութիւնը սկսեց խեղդել և կենացանի մարդկանց։ Պօլսոյ նաւահանգստում կանգնած եւրոպական զանազան նաւերից առնուազն տառը դիտողներ միատեսակ սարսափով բառ տռ. բառ պատմում էին ինձ, թէ ինչպէս, երբ իրենք իրենց նաւերից դիտում էին, միանգամայն զուրկ միջամտելու հնարաւորութիւնից, արշալոյսը բացեց նրանց աչքի առաջ այդ առագաստանաւերը, որոնցից խաղալիքների նման ծով էին թափուում ձեռք ու ոտք կապած մարդիկ՝ խցկած բերաններով և ոստիկանների նաւակների ամբողջ շարքը հետեւում էր, որ նրանցից ոչ մինը ջրի երես չը ռարձրանայ, իսկ եթէ զոհը միանգամից չեր սուզուում ծովի խորքը և թրպրուում էր ջրի երեսին, նրան սպանուում էին թիւակներով, Պետութիւններն և նրանց հետ մեր հայրենիքը այնպիսի խստութեամբ պահպանեցին չեղոքութիւնը, որ մի քանի հայերի, որոնք այնուամենայնիւ մի կերպ ազատուել էին խեղդուելուց, չընդունուեցին եւրոպական մակոյկների վրայ և հարածողները վրայ հանելով, կատարուում էին այն մարդկանց աչքի առաջ, որոնցից նրանք գուր օգնութիւն և պաշտպանութիւն էին խնդրում։ Միայն Փրանսիացիք չը կարողացան զսպել իրենց և իրենց բնաւորութեան համեմատ՝ մի քանիսներին վրկեցին և ապաստան տուին։

Այս բոլոր սարսափներն այժմս արդէն պատմութեան են պատկանում և ոչ որի համար գաղտնիք չէ, որ այդ շարաբաստիկ դէսքի ժամանակ բացասական դեր խաղաց այն ժամանակուայ ռուսական դիալոմատիայի ճակատագրական սխալը։ Նա յափշտակուած 80-ական թուականների համապաւեան գաղափարով, նախ ևանուշագրութեան մատնեց հայկական հարցը, ուշադրութիւն չը դարձնելով այն պարտադիր դրութեան վրայ, որ նա ստացաւ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի շնորհիւ, իսկ յետոյ հայերից երես դարձրեց կասկածու և թշնամական կերպ պով որովհետեւ Արդուլ Համբուլ կարողացաւ ներշնչել Պետերբուրգի շրջաններին ժամանակակից Մաքեալբելի իրեն յատուկ տաղանդով՝ ամենախիստ նախալաշարումն

հայոց ազգային շարժման մասին՝ ներկայացնելով այն որ պէս միջազգային յեղափոխութեան շառաւիդ նելիդովի և կօրանով Ռուսովուկուտ տիտուր և անուղղելի սխալը հարկադրեց ուստական կառավարութեան լուալ ձեռքբերը հայկական խնդրում, արտասանուեցին նշանաւոր խօսքերը, թէ «Ռուսաստանը երկրորդ Բոլգարիա չի ուզում» կարութանց, որ ամենաաննշան նորոգումներն անգամ, որով Բերլինի գաշնագիրը շատիդ էր ցոյց տալիս գէպի ինքնաշվարութիւն, վայրկենաբար մահուգի տակն ընկնէին. և Փոքր Ասիայի համար սկսուեց տերրորի շրջանը, որի նմանը չի եղել եւրոպական պատմութեան ընթացքում։ 1894 թուի Սասունի սարսափները մուացնել տուին թէ Բարդողիմէոսեան գիշերը, թէ Սիցիլիական երեկոն և թէ Քրիստիան Ո-ի արեան բաղանիքը և նոյն խակ կազանլիկի բօլգարների կոտորածը Վարդերի հօվտում, որը հետևեց գեներալ Գուրկոյի արշաւանքին և նահանջելուն։

Զեռքեր լուանալու սխալ քաղաքականութեան շնորհիւ մի այնպիսի վճռում, որն ամբողջովին Ռուսաստանից կախումն ունէր, մենք տուժեցինք՝ նախ կորցնելով մեր հեղինակութիւնը և քրիստոնեայ ժողովուրդների վստահութիւնը Փոքր Ասիայում, որոնք իրենց ազատուելու ամբողջ յոյսը մեզ վրայ էին դրել և ապա կովկասեան սոսկալի անկարգութիւններով, որոնք պարբերաբար սկսուելով Քեարամների, Նարիների և Միրզակուլովների աւագակութիւններից, վերջերս փոխուեցին հրդէնի, որը ոչնչացրեց Բաքուի նաւթը։

Բերլինի գաշնագրի 61-դ յօդուածը, որով Եւրոպան Հայաստանի համար նախասահմանում էր նոյն բարենուրոգումներն ինչ որ 23-դ յօդուածը մակեդոնացիների համար, բարերավին յը բարեփոխուեց հայ ժողովրդի բարեկեցութիւնն ու իրաւական դրութիւնը Որ 61 յօդուածը դուրս չէր գալ տեսական նախագծերի շրջանակից և դատապարտուած էր ժամանակի ընթացքում մեռած տառ գառնալու, այդ շատ լաւ զգում և հասկանում էին նրանք, որոնք 1878 թուի յուլիսի 13-ին ստորագրեցին այն Բեր-

Մինում՝ որպէս նշան Եւրոպայի դիւանագիտաթեան տարած յաղթանակի ռուսական զէնքի դէմ։ Հայ ժողովրդի առաջ ձդուած էր բարենորդումների յոյսը, որպէս բարոյական շնորհը, որպէս կեղծ ողորմութիւն աղքատին, որի մօտով անցնելը և նորա աղերսանկըներին ոչինչ չը տալը բարեգործ մարդու համար դժուարին է, իսկ որ և է բանով լուրջ օգնելու ցանկութիւն չկայ։ Եւ ահա բարեգործ մարդը դնում է մեկնած ձեռքի մէջ անպէտք՝ այլ ևս չը գործածուող արտասահմանեան դրամը և ասում. առ և հանգիստ թող ինձ։ Որ ես ցանկութիւն ունէի քեզ բան տալու, դա Աստուծուն յայտնի է, իսկ եթէ ողորմութիւնս քեզ պիտանի չէ, դրանում ես մեղաւոր չեմ, քո գործդ է . . . յարմարուիր։ Տարաբաղդաբար, հայերին անպէտք դրամով ողորմութիւն տալով, պետութիւնները հաշուի չառին, թէ ինչ աստիճանի և որքան էր տանջուած այդ գժբաղդ աղգը։ Նոքա ի նկատի չունեցան, որ խեղդուողը ծղնուտից է բռնում, և որ հայերը, շնորհիւ իրենց յուսահատական դրութեան, այնուամենայնիւ կը սկսեն յարմարուիլ, որպէս զի Եւրոպական նենգամիտ և տեսական օգնութիւնից իրենց համար որ և է գործնական բարիք դուրս մրցեն։ Տանջուող երկրի համար բացուող յոյսը զարթեցրեց ժողովրդի ինքնաճանաչութիւնը. — ստրուկների մէջ զարթեց ազատ մարդու զայրացկոտ խիզնը. Եւրոպան հայերին նշան արաւ դէպի ազատութիւն և նրանք գրոհ տուին դէպի նաւ. Նախ՝ միամտաբար յուսադրած տէրութիւններից ոտացած դիւանագիտական ազնիւ խօսքի հաստատութեան վրայ, նրանք սկսան բարձրածայն գանգատներով բողոքել, տրտնջալ և հառաչել ժողովրդական խռովութեամբ, և ապա, երբ համոզուեցին, որ լավիս են խուլերի առաջ և իրենց վէրքերը բաց են անում կոյրերի առաջ, սկսեցին զինուած դիմադրել թուրքական բարբարոս կամայականութեան՝ պարտիզանական ապստամբութեամբ, Սասունի ինքնապաշտպանութեան՝ Անդրանիկի, Վահանի, Գէորգի և այլոց խմբերով։ Երբէք ոչ մի ազատագրական շարժում մատնուած և

բռնութեան զոհ չէր դարձրած այնպիսի անգիտութեամբ, որը ան հայկականը՝ Ապստամբները՝ փոխանակ եւրոպայից յուսացած օգնութեան, բացի թոյլ Խոտլիայից, որ դաշտ նոր էր ձեռք բերել իւր ազատութիւնը և չէր դաւաճանել նրան, բոլոր մեծ պետութիւնների կողմից հանդիպեցին պարզ անբարեացակամութեան։ Մնացած բոլոր պետութիւնները՝ Փոքր Ասիայում նիւթականապէս շահագրգռուած՝ հայկական խնդրում հանդիսացան կամ մերձաւոր Արևելքում գերիշխելու և ազգեցութիւն ձեռք բերելու մրցմամբ կապկապուած, ինչպէս Անգլիան և Ռուսիան, կամ Արգուլ Համբիդի ճարագիկ քաղաքականութեամբ խարուած՝ որպէս Գերմանիան, որը Պրեսանսէն սրամիտ կերպով «չայի փոխ տալու» քաղաքականութիւն կոչեց, կամ այլ տէրութեան կամքին ենթակայ, ինչպէս Թրանսիան, կամ վերջապէս չնորհիւ իւր միանգամայն որոշ աշխարհակալական քաղաքականութեան, ինչպէս Աւստրօնիան, որ հետեւղաբար ձգտում է յառաջ խաղալ դէպի էգէյեան ծովը և միանգամայն անտարբեր է դէպի Արևելեան այն խնդիրները, որոնք այդ գործնական շրջանակից գուրս են։ Հայկական շարժումը եւրոպական կառավարութեանց կողմից ոչ միայն համակրանքի չը հանդիպեց, այլ ընդհարուեց ուղղակի նրանց հակակրութեան, նա բոլորին խանգարում էր որպէս քաղաքական անսպասելի անտարբտութիւն, և որպէս սպառնալիք այն մեծ պայմանական ստի, որը քաղաքականութեան մէջ յայտնի է «զինեալ խաղաղութիւն» տիրահոչակ անունով։ Նա ոչ միայն միայնակ մնաց, այլ և հալածանքի հանդիպեց։

Անգլիական և գերմանական կառավարութիւններն հայկական հարցը երկար ժամանակ համարում էին ուստական ագիտացիայի (դրդման) հետեւանք, որը գաղտնի ճանապարհ էր հարթում ապագայի համար Փոքր Ասիայում երկիրներ յափշտակելու, որն իւր աջ ձեռքը մեկնել էր դէպի Բօսֆոր, իսկ ձախ ձեռքը դէպի Պարսից ծոցը՝ Հնդկական Ավլիանոս գուրս գալու։ Այս կարծիքը և մանաւանդ երկրորդը մուտք գործեց հասարակութեան մէջ։

էլ։ Հայկական հարցի գերմանիայում՝ ժողովրդականութիւն շը գտնելու գլխաւոր պատճառն էր այն զրաբարտութիւնը, որը տարածւում էր Պօլսոյ բարձր դռան և գերմանական կայսերական պալատի կողմից, որ հայկական հարցը ոռւսական աշխարհակալական մի ճարպիկ ինտրիգ է և հայերն՝ իրենց անդուլ ազգային շարժմամբ ոռւսական գործակալներ են, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար իրադործում են միջազգային մարտի հրաւերի հոկայական նախագիծը ընդհանուր եւրոպական պատերազմ առաջ բերելու։ Զընայելով, որ Ռուսաստանը իւր անտարբերութեան բազմաթիւ շօշափելի և պէտք է խոստովանիլ (եթէ աւելին չասենք) շատ ցաւալի ապացոյցներ տուաւ գէալի հայ ժողովրդի վիճակը, բայց զրաբարտութիւնը գեռ ցայսօր էլ մնում է հաստատուն։ Հայերը Դերմանիայում ունին շատ անձնուեր և համօգուած բարեկամներ, ինչպէս օրինակ ուստիցապետ Թօն Բարը (Հաագայի վեհաժողովի պատգամաւոր), Բերլինի դիտարանի վերատեսուչ Վ. Ֆօրստերը, յայտնի օօցիալիստ Բերնշտէյնը և այլք։ Հայասէր էր նաև հանգույցեալ պատմաբան Մումչէնը։ Բայց վերոյիշեալ կեզծիքի մասին նախապաշարմունքը շատ լուրջ գլխներ և նոյն իսկ հասարակութեան առաջաւոր խմբեր հալած իւզի տեղ էին ընդունում։ Դերմանական հայասէրների մեծագոյն մասը առաջ է գալիս Մերձաւոր Արևելքի բաղաքական միստիաներից և նրանց հետ կապ ունեցող մարդասիրական ընկերութիւններից և հիմնարկութիւններից, որոնց գըլուխ են կանգնած յայտնի գոքտոր Լէպսիուսը և Բօրբախը։ Բայց խիստ կերպով սահմանափակելով իրենց գործունէութիւնը քարողչութեամբ ու բարեգործութեամբ, գերմանական միստիան, Արդուլ Համիլի կողմից ամենից շատ հովանաւորուած, առանձին խնամքով իրեն հեռու է պահում քաղաքականութեան հետ որ և է առնչութիւն ունենալուց։ Իրենց «հանդերձեալ թագաւորութիւնն» արատաւորելու երկիւղը ամբողջովին և չափից դուրս այս աշխարհի թագաւորութեան առաջ, նրանց

համակրանքը զբկում է գործնական օյժից ու նշանակութիւնից ընդարձակ ազգային չափով։ Դա օժանդակութիւն է շատ շատերին, կարիք ունեցող շատ հայրերին, բայց ոչ հայ ժողովրդին։ Նոյնը պէտք է տաել նաև Դանիայի, Հոլլանդիայի, Բէլգիայի, Միացեալ Նահանգների և նոյն իսկ ֆրանսիական միսահաների մասին։ Նրանք բոլորն եւ այնքան թանկ են գնահատում իրենց կրօնական—քաղաքակրթական, բարեգործական և քարոզական գործունէութիւնը, որ սիրու չեն անիլ քաղաքական բողոքներ տալու, որոնցով նրանք ստիպուած կլինէին վատնել իրենց տմբողջ ժամանակը այդ գժոխային հալածանքների երկրում, Դանատի՝ այդ երկրի երեսին գտնուած գժոխքում։

Այսուհետեւ Գերմանիային դալով, չը պէտք է մռանալ նրա հասարակական կարծիքի անտարբերութիւնը արտաքին քաղաքական ինսդիրներում։ Գերմանական կոյսերութիւնը գեռ այնքան գեռահաս է, գեռ այնքան լի է ներքին ոյժերի մրցմամբ՝ որ կատարում է ընդհանուր կայսերական և դաշնակից սահմանադրութեանց մէջ ոամկավարական սկզբունքներ ամրապնդելու նպատակ չունին օտարների կարիքներով զբաղուելու։ գեռ սեփական տունը լի է հագսերով, որոնք պահանջում են արագ և անընդհատ տենդային գործունէութիւն։ գերմանացիք գեռ իրենց կտուրներն էլ չեն շինել՝ վերջացրել։ Այդ պատճառով, որ քանի մեծ է գերմանական հասարակական կարծիքի ազգեցութիւնը ներքին հարցերում, նոյնքան թոյլ է արտաքին խնդիրներում, որոնք համարեա քացառապէս կեդրոնացած են Վիլհելմ Ա-ի հզօր ձեռքերի մէջ։ Իսկ Վիլհելմի մասին, տաճկաց «զայ փոխ տալու» քաղաքականութեան բնորոշ հեղինակը՝ Ֆրանսիա Պրէսանսէն, նկատել է մի միտինգի ժամանակ, որ թագակիր Լօէնդրինը, կարապի թափուաշրջիկ ասպետը, եւրոպական բոլոր թագաւորների մէջ առաջինը եղաւ, որ բռնուեց Սուլթան Աբդուլ Համիդի առետրական կարթով։ Եւ իրաւ, Վիլհելմ Ա-ը, որպէս համագերմանականութեան տետոնական կուր-

կամփ-ի առաջնորդ, կարողացաւ գերմանական դրամագլուխի համար նուաճել փողազուրկ Տաճկաստանը, տնտեսութէս ստրկացրեց Փոքր Ասիան և որպէս նշան իւր յաղթութեան՝ Պօլսի հին բիւզանդական կրկէսի տեղը կանգնեց մի հոյակապ, բայց ոչ նրբագործ, աւագան։

Բայց այդ յաղթութեան մէջ մի բան կայ, որ յիշեցնում է արջի և սրսորդի մասին եղած զուարճախոսութիւնը։

— Արջ բռնեցի՞ւ

— Քաշ տուր այստեղ։

— Զի թողնում։

Հըհերքելով այն նիւթական օգուտները, որ ձեռք բերեց գերմանական դրամագլուխը Փոքր Ասիան տնտեսապէս նուաճելով, չի կարելի պարզապէս չը տեսնել, որ Գերմանիան ինքն էլ չընկատեց, թէ ինչպէս այդ ոսպէս սպասի փոխարէն վաճառեց իւր բարոյական ազատութիւնը տաճկական քաղաքական գործերում, իսկ Վիլհելմ Ա կայսրը Տաճկաստանը ստրկացնելիս, ինքն էլ ստրկացաւ «իւր բարեկամ» Արդուլ Համիլի հետ համերաշխ ընթանալու գործում կասկած չկայ, որ Վիլհելմ Ա-ը, որպէս քրիստոնէական ոգով կրթուած մի կայսր, չի կարող չը վրդովուել թուլքական բէժիմի շնորհիւ Հայաստանում և Մակեդոնիայում տեղի ունեցած սարսափներով։ Անպարկեշտ յուշագիրները հրատարակեցին մի շարք ամենաչար և յաճախ սրամիս ծաղը և կծու իայթումներ, որ գերմանական կայսրն ուղղել է մերձաւորների շրջանում իւր Պօլսոյ բարեկամի հասցէին։ Բայց թագակիր Լօէնդրինը Տաճկաստանում թէ իւր, թէ պետական և թէ ժողովրդական շատ միլիոններ է ծախսել։ Նա կըյր փոխատուի օրն է ընկել։ Նա զետեղել է դրամագլուխը ոչ շատ յուսալի ձեռքերի մէջ և դրա փոխարէն իւր վճարելու անկարող պարտապանի գործերի ամենափոքր արգելքի, ընտանեկան ամեն դի գժգոհութեան և տագնապի ժամանակ, մշտական երկիւղի ու կատկածի մէջ է։ Վայ թէ սնանկանայ, վայ թէ ինամակալութեան տակ

դնեն, վայ թէ մեռնիւ Վիլհելմ։ Ա-ը պարտուած յաղթաւնակող է։ Սքդուլ-Համիդը՝ իրեն յատուկ չար տաղանդով, կայսերը թողեց յաղթանակի ամրողջ արտաքինը։ իսկ ինքը վերցրեց նրա էտական մաօք, ինչպէս գիւղացու և արջի ընկերութեան միջոցին՝ «քեզ ծայրերն, իսկ ինձ արժատները»։ Նա ի դէմս Վիլհելմ երկրորդի ձեռք բերեց հաւատարիմ ծառոյ, որը՝ շահագրգռութեած է թուրքական ներկայ րէժիմը պահպանելու գործում։ որովհետեւ ամենայն յեղափոխութիւն, իշխող տան մէջ որ և է փափօխութիւն, կամ մրցող տէրութեանց մէջ որ և է մինի գերակշռութիւնը կը սնանկացնի գերմանական կապիտալը։ Եւ ահա մենք տեսնում ենք, թէ ինչպէս Վիլհելմ Ա-ը Սքդելքի քրիստոնեայ ազգերի իննդրում ակամայից երկդիմի դերակատար է դառնում, խօսքով ապիտակ, իսկ գործով անգոյն կամ բացատկան՝ սև դեր է խաղում, 1902 թուին հայերը կարողացան մուտք գործել Վիլհելմի մոտ մի ուսուցչապետի միջոցով, որ կայսեր անձնական բարեկամ էր համարւում, պատասխանն ամենասիրալիր և սկզբունքով համակրական էր։ — «բայց դեռ հայկական հարցը քաղաքական հողի վրայ դնելու ժամանակը չի հասել», առաջնա, Գերմանական դեսպանութեան բողոքը՝ 1904 թուի Սանոյ սպանութեանց առթիւ, Սքդուլ Համիդին մի միայն ծիծաղ պատճառեց, որովհետեւ մինչդեռ դիւանագէտները սուլթանին սպանում։ Էին ձեւական դիւանումներով, Վիլհելմը կայսրը նամակով հանգուտացրեց նրան և խորհուրդ տուաւ ինքնակալ պետին վայել դիրք պահել և չը մոռանալ, որ նրա հպատակների գործում ոչ ոք իրաւունք չունի միջամտելու բացի Աստուածանից, որ իւր ողորմութեամբ իշխանութիւն է պարզեւում, և բացի իրեն՝ սուլթանից, որ Ալլահի ստուերն է երկրիս վրայ։

Անդիմայի երկար կասկածամութիւնը՝ որ հայերը ռուսական յառաջխաղացման նախամարտիկ չը հանդիսաւնան Ասիայի խորքերում, ինչպիսի դեր որ նրանք համարեա ամբողջ երեք դար կատարում էին մեր և թուրքական կուներում, խախտուեց մասամբ նրանով, որ ռուսական

արտաքին քաղաքական շահերը շատ ակներեւ կերպով Մերձաւոր Արևելքից փոխուեցին Հեռաւոր Արևելք. բայց դլխաւորապէս Փոքր Ասիայի քարոզիչներից ստացուած տեղեկագիրների շնորհիւ և հասարակական կարծեաց ճնշման տակ, քարոզիչների, որոնք չը վախեցան կրօնականից անցնել քաղաքական խնդիրներին Հանգուցեալ Գլադատօնի որոտնդուտ ճառերը անդիմական քաղականութեանը նոր ուղղութիւն տուին, որը հայոց նպաստաւոր էր: Միջամտութեան խնդիրը հասունացաւ: Անդլիան այն տէրութիւններից չէ, որոնք իրենց բարերարութիւնը ձրի շաղ են տալիս, բայց 1894—96 թուականներին նրա վարմունքը հայկական խնդրում կարելի է միանդամայն անշահասիրական համարել. միակ դրդիչը այն սարսափին էր, որ ներշնչեց Գլադատօնը Անդլիայի միացեալ թագաւորութեան բնակիչներին իւր խաչակրական ճառերով Սասնոյ սպանդանոցից յետոյւ Հակառակ այն ժամանակուայ ուուսական պաշտօնական մամուլի հաւաստիացումների, անդիմական համակրանքը դէպի հայեր յետին՝ ուուսական հեղինակութեան դէմ ուղղուած՝ մտքեր չունէր: Անդլիան այն ժամանակ նոյն իսկ հակառակ չէր, որ հայկական բարենորոգումները ուուսաց միջոցով մտցուէին: Արգայլի դուքսը առանձին դրբոյկով բարձրաձայն յայտաբարեց, որ նոյն իսկ ուուսական պլոտէքտորատը Փոքր Ասիայում նա գերադաս է համարում արեան բէժիմի խմբական կտառածներից, որ «կարմիր Առլիմանը» դարձրել է կանոնաւոր մի սիստեմ: Գլադատօննեան դպրոցի և նրա սկզբունքների տէր Անդլիայի քաղաքագէտները մինչեւ օրս էլ կրկնում են, որ հայկական հարցը բաւարար կերպով կարող է լուծել մի միայն Ռուսիան:

Անդլիայի փորձը 1896 թ. վերջ դնելու սուլթանի մօլեգնութեանց և հայոց տանջանքներին, անյաջողութեան հանդիպեց՝ բաղկելով Ռուսաստանի կտրուկ մերժման, որի կամքին արձագանք էր տալիս Թրանսիան իւր նախարար Հանօտոյի բերանով: Անդլիան մնալով միայն թոյլ իտալիայի հետ, անկարող հանդիսացաւ լուրջ կերպով միջա-

մտելու և ճնշում՝ գործ դնելու թուրքական կամայական նույթեան վրայ, որ իրեն ամրոցի պէս շրջապատել էր տէրութիւններից մի քանիսի չեղոքութեամբ և միւսների քաջալերութեամբ։ Անյաջողութիւնը Անդլիային և հայոց համակրող յառաջադէմ եւրոպական խմբերին չափազանց պհատեցրեց։ Այդ վայրկեանից հայկական խնդիրը կարծես մարեց Մեծ Բրիտանիայի կղղիներում, իսկ Տրանսվալի պատերազմը մոռացութեան մամուռով պատեց այդ խնդիրը։ 1904 թուին, երբ Սասնոյ հայերը նորից խօսեցրին աշխարհը Արդուլ Համիդի ձեռքով պատրաստած նոր թշուառութեանց մասին, հայասէր Բենտինգը «Contemporary Review» թէրթի խմբագիրը, անկեղծ կերպով խօստովանուեց, որ գեռ երկու տարի առաջ նա երբէք չէր հաւատալ, որ հայկական խնդիրը նորից երեան կըդայ այն խորութիւնից, որտեղ նա ընկղմուել էր։

Իսկ հայկական հարցը երեան եկաւ Թրանսիայում և շնորհիւ Թրանսիայի։ Ի հարկէ ոչ պաշտօնական Ծրանսիայի շնորհիւ, որի սանձից բռնած ոռւսական յետադէմ՝ հայոց յայտնի կերպով հակառակ բիւրօկրատիան, որ նրանք ոռւսացման խնդրում՝ դժկամակել և դիմադրել էին, քարշէր տալիս ուղած կողմը աւելի քան երբ և իցէ, իսկ Պօլսից էլ հայերին անընդհատ ներկայացնում էին որպէս միջազգային յեղափոխութեան անուղղելի վարիչներ։ Ընդհակառակին՝ պաշտօնական Թրանսիան շատ մեծ ճիգ գործ դրեց շահագրգուած դիւանագէտների և վարձկան մամուլի շնորհիւ, որպէս զի ծածկէր և ոչինչ համարէր մերկացրած փաստերը։ Բայց, թէև ուշացած և վատ նկարագրուած, նրանք իրենց սոսկալի սարսափներով աղաղակում էին դէպի երկինք։ Մայրահեղ ձախակողմեաններն ու ծայրահեղ աջակողմեանները—ընկերվարական և կաթոլիկական ընդդիմագրականները՝ հայոց խնդրում միացան միաբան գործելու համար։ Հայր Շարմտանը հրատարակեց իւր նշանաւոր և աղմկայոյզ դիրքը «Հայ ժողովրդի մարտիրոսագրութիւն» անունով։ կազմուեց Pro-Armenia-ի մասնաժողովը, ինչպէս և Լօնդոնում (Balkan Committee)։

Մի շալք համաժողովներ, գիտութեր և միտինգներ վերաջապէս բանը այնուհեղ հասցրին, որ պալատում հարցապնդում տեղի ունեցաւ Պրեսսանեէի, Դըմի Կօշէնի, դուքս Մէնի, Ժօռէսի և այլոց ուժեղ ճառերով։

Եւրոպան այստեղ առաջին անգամ լսեց այն շարժման ճշմարիտ ձայնը, որ Արևելքը հանդէս էր դնում նրա առաջ որպէս բնկերվարական—յեղափոխական, որպէս սեպարատիստական (անջատողական), որն իբրև թէ ուղղ զուած էր Ասիական նոր պետութիւն ստեղծելու և որի նպատակն էր կորել դրա համար Տաճկաստանի, Ռուսիայի և Պարսկաստանի հողերը, խանդարել եւրոպական հաւասարակշուութեան սխտեմը և զինեալ խաղաղութեան տիսուր հանգստութիւնը։

Կաթոլիկ և պահպանողական Դըմի Կօշէնը հրապարակ հանեց Հայոց Դաշնակցութեան ծրագիրը, որ հիմնառուած է իննուունական ժուականներին Պետերբուրգի և Մոսկվայի համարարանների նաև կիմ ուսանողների ձեռքով։ Պալատը զարմանքով լսեց, որ այդ սարսափելի մարդկանց ծրագիրը մի միայն բառացի կրկնութիւն է Բերլինի գաշնագրով խոստացած բարենորոգման պայմանագրի և միաձայն ընդունեց, որ հայ ժողովրդի պահանջները ոչ թէ միանդամայն օրինական են, բաւարարելու և պէտք է իրագործուին, այլ և զարմացնում են իրենց խելացի շափառութեամբ։ Ժան Ժօռէսի գործանալի պարզ ճառը ուստական քաղաքականութեան սխալմունքների մասին նրա համալաւոնականութեան շրջանում և ֆրանսիական արտաքին քաղաքականութեան ուստական կապրիզներին (քահաճութիւններին) հետեւը առաջին անգամ հրապարակ հանեց իշխան Լօրանով Ռուսովովսկուի վերեւ առաջ քերած ափօրիզմը, որով նա պատճառաբանեց Ռուսաստանի մերժումը միւս պետութիւնների հետ թուրքահայկական խնդրում միջամտելու առթիւ։

— Ես չեմ ցանկանում, որ Տաճկահայաստանը երկրորդ Բօլղարիա դառնայ և ուստահայերը օգուտ քաղեն մեր գէմ այն հիմնարկութիւններից, որ կրստեղծի աաճկական

պրօտէքտորատի (գերիշխանութեան) ներքոյ գտնուող ինքնավար Հայաստանը:

Խուսական դիւանագիտական մարմնի ձգտումն՝ առ զատ պահելու կովկասի ծրագրուած ռուսացումը «Մեծ Հայաստանի ցնորական առասպելը մինչև Դօնի Ռօստովը», որ ստեղծեց «Նովոյէ Վրեմիա» թերթի եռանդակուս թղթակիցը, խիստ կերպով փոխեցին ռուսական քաղաքա-քականութիւնը Մերձաւոր Արևելքում և հարկադրեցին նրան հրաժարուել մահմէդական բռնութեան տակ հեծող քրիստոնեաների գաղրաւոր պաշտպանի գերից, Մենք սխալմամբ զոհ բերինք Հայաստանի վիճակը Սուլթանին, կարծելով, որ նրա ստրկական թուլութեամբ կը կարողաւ նանք ապահովել խաղաղութիւնը մեր սեփական Անդրկովկասում։ Մենք սառնասիրտ կերպով աչքաթող արինք Սասունը 1894 թուին որտեղ քրդերը կոտորեցին հայերին, իսկ 1896 թուին եւրոպական մամուլը խիստ կերպով գատապարտում էր մեր Պօլտոյ դեսպան Նելեղովին կ, Պօլտոյ արիւնհեղութիւնը թոյլատրելու մէջ, որի նկարագրով և սկսուեց յօդուածաւ Այդ վատ լուրերը չկարողացաւ ոչնչացնել նոյն իսկ շօշափելի ոյն հանգամանքը, որ անկարգութիւնները դադարեցին մի միայն ռուսական գեսպանութեան միջամտութեան շնորհիւ, որ միայն դեսպանութեան աւագ պաշտօնեալի (Դրագօմանի) եռանդուն միջամտութեան շնորհիւ ադամուեց Օտոմանի բանկը աւելութելուց և որը տաճկական կառավարութեան և եւրոպական կապիտալին արած այդ մեծ ծառայութեան փոխարէն հնարաւորութիւն տուաւ հայկական ինքնապաշտպանութեան յեղափոխականներին անվտանգ թողնելու Պօլիսը և Մարսէլլ մեկնելու։ Պօլտոյ դիւանագիտական շրջաններում ծնունդ առած եւրոպական լուրը հաստատապէս պնդում էր, որ ռուսական գեսպանատունը ներկայ դէպքում նմանուեց Պօլէյդօնին, որի իշխանութեան ներքոյ է ծով փոթորկելու ու խաղաղացնելը։ Կրկնում և զանազան կերպով մեկնաբանում էր — massacrez, Majesté! — (կոտորեցէք, տէր արքայ), որ իբր թէ նելիդովս ասել էր

Արդուլ-Համիդին, երբ վերջինս յայտնել էր իւր անդօք ըութիւնը հայկական յեղափոխական հրդէհը խաղաղ կերպով հանգցնելու ես այդ միջոցին տեսնուեցի Նելեդովի հետ և իմ նրա հետ ունեցած երեք խօսակցութիւնից միանգամայն հաստատ հիմք ունիմ հաստատելու, որ նրան վերագրուած առասպելական խօսքերը նա չի արա առասանել և շնորհիւ իւր մեղմ բնաւորութեան և նուրբ կրթութեան, հազիւ թէ նա ընդունակ լինէր այդ բառերն արտասանելու Բայց, արարաբաղդաբար՝ նա ինչ որ ցեղական հակակրութիւն էր տածում դէպի հայութիւնը, և խորապէս համոզուած էր, որ հայերն «ապստամբուում են» ոչ միայն թուրքական խայտառակ րէժիմի դէմ, այլ իրենցից ներկայացնում են համաշխարհային յեղափոխութեան ֆէրմէնտ (թթխմոր). հաւատում էր ոռուսական հայերի անջատման տենչանքներին և ահա այդ բոլոր պատճառաներով այդ դժբաղդ խնդրում նա բռնեց վտանգաւոր երկդիմի դիրքը. Աչք գոցելով ցեղական և դաւանական խնդրի հանդէպ, նա պնդում էր, որ հայկական հարցը Տաճկաստանի ներքին խնդիրն է, և որ սուլթանին, որպէս ինքնակալ թագաւորին, չի կարելի զրկել իւր հապատակների մէջ ակնյայտնի սկսուող խռովութիւնը զսպելու իրաւունքից. Պօլսոյ սոսկալի օրերը խիստ շօշափելի կերպով մերկացրին բիւրօկրատիական այդ պայմանական տեսութեան կեղծիքը. Իլտիզ քեօշկի ագիտացիայով արթնացած և դեսպանատների լրութեամբ քաջալերութիւն դտած մահմէդական կատաղութիւնը սպառնում էր հայկականից անցնել ընդհանուր քրիստոնէական կոտորածի, և ոռուսական դիւանագիտութիւնը՝ իրեն կամքի հակառակ, ստիպուած եղաւ սիրտ անել խանգարելու շը միջամտելու նախապաշարեալ ծրագիրը և քաղաքավարի այն շատ քաղաքավարի, վահան դառնալ կատաղած գաղանի և նրա զոհերի մէջ.

Որքան էլ տխուր էր ոռուս դիւանագիտութեան բըռնած ընթացքը հայկական խնդրում, այնուամենայնիւ նա գէթ արտաքուստ աւելի վայելուչ կերպով տարուեց, քան-

